«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Մակբայ թեմայի ուսուցման իմ փորձից
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Աղաբեկյան Հայկանուշ
ՄԱՐԶ	ք.Գյումրի
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ

Ներածություն

Դասավանդման ընթացքում, փաստ է, ուսուցչի ուղադրությունը կենտրոնանում է ծրագրային նյութը ամբողջությամբ և ժամանակին մատուցելու վրա: Սակայն կան թեմաներ, որոնց ուսուցման ընթացքում ուսուցիչը ստիպված ժամաքանակից շեղում կարող է կատարել նյութը առավելապես ընկալելի դարձնելու և հետադարձ կապը ապահովելու համար:Ըստ իս՝ դրանցից է մակբայի ուսուցումը:Ելնելով մակբայի առանձնահատկություններից՝ այս թեման հրաշալի է լեզվի և գրականության կապը ապահովելու համար:Ուսուցչի նպատակը պետք է լինի ուղակետի ստեղծագործական ունակությունների զարգացումը այս թեմայի դասավանդման ընթացքում:

Թեմայի լավ յուրացումը որոշ չափով պահանջում է նաև մեխանիկական հիշողություն, որը դասագրքի մեջ նշվում է «Սովորիր անգիր» հղումով:

Դժվարություն է ներկայացնում ածականի և մակբայի տարբերակումը խոսքիմեջ՝ որպես հատկանիշ ցույց տվող բառեր:

Դժվարություն են ներկայացնում նաև ընդհանրական մակբայները, որոնց մասին կփորձեմ խոսել ստորև:

Նյութի յուրացումը ենթադրում է խիկ, Տաձև աղյուսակ, փոխկորն մեթոդները:

Ուսուցիչը դասն սկսում է մակբայ բառի բառակազմությունը բացատրելով: Աշակերտը արդեն ծանոթ է *բայ* բառին, գիտի,որ բայը ցույց է տալիս գործողություն. ուրեմն *մակ+բայ* , որտեղ մակ –նախածանց, բայ՝ արմատ , այսինքն՝ բայի վրա դրված: (1.251)

2. Գրատախտակին գրում է երկու բայ և հանձնարարում դրանց տալ իրենց ոչ ծանոթ լրացում (նրանք արդեն ուսումնասիրել են գոյական, ածական, թվական, դերանուն, բայ խոսքի մասերը):





Աշակերտները կգրեն տարատեսակ լրացումներ և ինքնուրույն կգան այն եզրակացության, որ լրացումների մի մասը ցույց է տալիս գործողության կատարման.

1. Տեղը- ամենուր, ամենուրեք, այլուր
2. Ձևը – խոհեմաբար, քաջաբար, առերևույթ
3. Ժամանակը- արդեն,դեռ, վաղը

4. Չափը –բազմիցս, քանզիցս ,բավականին

ՈՒսուցիչը դրդում է , որ աշակերտները ինքնուրույն գան հետևության.

Ուս-ուրեմն ի՞նչ է ցույց տալիս մակբայը

Աշ- իրար լրացնելով՝ պատասխանում են, որ ցուց է տալիս գործողության կատարման տեղը , ձևը, ժամանակը , չափը :

Ուսուցիչը գրատախտակին գրում է երկու բայ և աշակերտները գրում են լրացումներ՝ մատնանշելով գործողության տեղը:





2. Ուս-ը գրատախտակին գրում է նախադասություններ, աշակերտները լրացնում են տեղի մակբայներ

1.Զայրացած գնաց *դուրս , տնետուն*

2.Աշխատանքը եռում էր *ամենուր, ամենուրեք*

3. *Շուրջս* գարունն է ծաղկում :

Զարգացնում ենք աշակերտի տրամաբանությունը

Եթե ուղիղ –*գնալ* բայաձևը կօգտագործենք

Գնալ ներքև -իջնել

Գնալ վերև- բարձրանալ

Աշակերտները հարցեր են տալիս և գալիս հետևության, որ մակբայը պատասխանում է *ու՞ր, որտե՞ղ հարցերին :*

Տնային հանձնարարություն- դասագրքից ընտրել որևէ թեմա («Արտիստը», «Հասարակաց որդեգիր»…)դուրս գրել տեղի մակբայները՝ նախադասություններով:

2. Հաջորդ դասին

Զարգացնում ենք աշակերտի մտածողությունը՝ պահանջելով գրել բային լրացում՝ եր՞բ հարցին պատասխանող: Այն չպետք է լինի իրենց ծանոթ խոսքի մաս(գոյական, ածական, թվական դերանուն) վերցնենք նույն <u>գնալ</u> բայը:



1. Աշակերտները գրում են բառակապակցություններ՝ խոնարհված բայերով: Հետո այդ բառակապակցություններով կազմում են նախադասությունները: Խրախուսվում են այն աշակերտները, ովքեր ժամանակի մակբայի հետ գործածում են նախորդ դասին անցած տեղի մակբայը :

2.Աշակերտները գրում են – *հիմա* գնում է ,*այսօր* կգնամ , *վաղուց* է գնացել ,*դեռևս* չի գնացել, *առմիշտ* է գնացել,*առավոտյան* է գնալու, *այսուհետև* գնալու եմ ,*երեկոյան* է գնացել ,*երեկ* է գնացել, *առայժմ* չի գնացել:

Հանձնարարվում է սովորել անգիր ժամանակի մակբայները (այս աշխատանքից հետո հեշտ կլինի մտապահել, որովհետև ոչ թե մեխանիկական, այլ դատողական մտապահում կլինի):

Ճիշտ չեմ համարում ածականը մակբայից տարբերակել բաղդատման աստիճաններով: Դա լավ միջոց չէ, որովհետև շատ մաբայներ ածականի նման ունեն այդ աստիճանները (ավելի արագ գնալ), իսկ շատ որակական ածականներ էլ բաղդատության աստիճաններ չունեն (պոչատ,թևատ) (1.254):

Մակբայի հաջորդ տեսակը ձևի մակբայն է:

Անունից դատելով՝ աշակերտը հետևություն է անում , որ ձևի մակբայը ցույց է տալիս գործողության կատարման ձևը:



Դիմենք ուսուցման ձնագնդի մեթոդին

Ուսուցիչ – *վագեվազ* գնացի

1 աշակերտ – *Վագեվազ* գնացի հանդիպելու ընկերոջս:

2 աշակերտ -(ներմուծում է ևս 1 մակբայ) *Առավոտյան* (ժ. մ)*վագեվազ* գնացի հանդիպելու ընկերոջս:

Գիտենք, որ կան բառեր որոնք կարող են ցույց տալ և՛ գոյականի, և՛բայի հատկանիշ:

Դիմենք Т – աձև աղյուսակին

Ածական	Գործողություն
Լավ մարդ	լավ խոսել
Դանդաղ ընթացք	դանդաղ ընթանալ
Անգիր զեկույց	անգիր զեկուցել

Համամիտ եմ այն կարծիքին, որ եթե գոյականի արմատը բայահիմք է այն դիտել որպես մակբայ (1.253), օրինակ՝

դանդաղ ընթացք (ընթանալ)

ուժգին հարված (հարվածել)

հապճեպ ավարտ (ավարտել)

2.Տնային առաջադրանք –ուսուցիչը թելադրում է տեքստը և հանձնարարում է

1. բաց թողած տեղը լրացնել մակբայով :

2.Կատարել ծանոթ խոսքի մասերի ձևաբանական վերլուծություն:

<<Արևելքի մի հրագեղ աշխարհում արդարամիտ ու խելացի մի թագավոր է լինում: Մի օր կանչում է իր որդիներին ու ասում.

-Սիրելի՛ որդիներ, ձեր հայրը_____ ծերացել է ու _____չի կարող երկիրը կառավարել: Ես_____ իջած կլինեի իմ գահից, եթե_____ կատարված տեսնեի այն միտքը, որ _____ _____ հուզել է հոգիս : Եվ _____ ձեզնից ով որ լուծի իմ այդ միտքը, նա կստանա իմ թագը և_____ կկառավարի իմ ժողովրդին >>: Կարելի թելադրել մակբայները և հանձնարարել դրանք տեղադրել համապատասխան տեղում (Այժմ, վաղուց, մշտապես, այլևս, ժամանակով, տարիներ ի վեր, արդեն, վերջապես, ցմահ): (5 էջ.127)

Չափի մակբայ. աշակերտները հետևություն են անում , որ ցույց է տալու գործողության կատարման չափը: Գրատախտակին գրում ենք՝

Ճանապարհը բավականին անցել էր, երբ լսելի եղավ ձիերի վրնջոցը :

Գտնում ենք բայը (անցել էր)

Գտնում ենք լրացումները – ճանապարհը (գոյական)

2.ինչքա՞ն էր անցել- բավականին (չափի մակբայ)

3.Աշակերտ – *հազիվ* լսելի եղավ վրնջոցը

Նոր դասը ամրապնդելու համար ուսուցիչը թելադրում է 2 նախադասություն և առաջարկում ավելացնել չափի մակբայները : Տրվում է մոտավորապես 5 րոպե:

1. Ես (բազմիցս)եմ հիշում փոքրիկ տղային, ով (անչափ)փայլում էր իր տաղանդով:
2. Ես, որ (չափազանց) հիացած էի նրա տեսքով և (սաստիկ) ուժեղ լինելով, (առավելապես)հետևում էի նրա լարված շարժումներին:

Չափ ու քանակի մակբային տալիս ենք ածական լրացյալ

— Չափազանց
- Խելացի
- համեստ
- Համբերատար

Չափի մակբայը չի կարող դրվել գոյականի վրա:

1 .Փոքրիշատե կարդացած

2 Փոքրիշատե քաղաք (չի կարող լինել) (1.254)

Դաս 4 Ընդհանրական մակբայներ

Ուսուցիչը գրատախտակին գրում է 2 նախադասություն

1. Ես *առաջ* շատ էի սիրում նրան:
2. Բեռի ծանրությունից հազիվ էր *առաջ* գնում:

Առաջ — 1 ժամ.մակ
Առաջ — 2տեղի մակ.

ՈՒսուցիչը առաջարկում է կազմել նախադասություններ շուտ- շուտ բառով:

1.Նա <u>շուտ –շուտ</u> էր գալիս մեր տուն: (չափ)

2.<u>Շուտ-շուտ</u> արի, մութն ընկնում է : (ձև)

Շուտ-շուտ — 1.ինչքա՞ն –չափ
Շուտ-շուտ — 2.ինչպե՞ս –ձև

Ուրեմն՝ մակբայները կարող են լինել ընդհանրական կամ տարիմաստ (2.308)

Երկիմաստությունը կարող է ձևավորվել նույն նախադասության մեջ ինչպես՝ << Շուտ հագե՛ք կապե՛ք զենք զրահ : Այստեղ շուտ մակբայը կարող է ընկալվել և՛ձևի, և՛ ժամանակի >>(3.146)

Հաջորդ ժամը տրամադրվում է մակբայի կազմության ուսուցմանը: Աշակերտները հիշում են բառերի կազմությունը , այն է՝ պարզ , ածանցավոր , բարդ , բարդածանցավոր գրատախտակին գրում ենք՝ պարզ(միշտ, դեռ, հաճախ), ածանցավոր (մշտապես, անընդհատ , նյութապես), բարդ (մեկ –մեկ, այլուր), բարդածանցավոր (վերջիվերջո, միառժամանակ): Աշակերտները լրացնում են խառը կամ համակարգված ձևով (նախ՝ տեղի մակբայ, ժամանակի ձևի չափի): Ուսուցիչը հիշեցնում է, որ ածանցների մի մասը առաջացել է արմատներից, ուրեմն՝ արմատի իմաստը կա բառում բար- բարք –ձև , պես նման, որեն-օրենք, պատիկ- հինգապատիկ, քառապատիկ, ուց- հնուց, վաղուց, մանկուց (համապատասխանում է իր բացառական հոլովին վերջավորությունը՝) և այլն:

- Կազմվում են գրաբարի քարացած ձևերով՝ տնետուն , դռնեդուռ , օրեցօր
- Հոդակապով –միահամուռ միաժամանակ
- Առ նախդիրով՝ քայլ առ քայլ ճակատ առ ճակատ
- Զ նախդիրով – չափազանց
- Հարակից կամ հականիշ, զույգերից ՝ ամառ- ձմեռ , այսօր-վաղը, գիշեր –ցերեկ
- Ու շաղկապով – գիշերուզօր , լուռումունջ
- Արմատի կրկնություն – տեղ –տեղ , ստեպ-ստեպ, զույգ-զույգ , արագ- արագ, շուտ –շուտ

Ուսուցիչը գրատախտակի մի մասում, գրում է մակբայի կազմության միջոցը, աշակերտները կազմում են մակբայը: Զարգացնում ենք աշակերտների լեզվական մտածողությունը. գրատախտակին գրում ենք բառեր. աշակերտները, հիմք ունենալով այս բառերը , կազմում են մակբայներ:

Քաղաք, տուն, օր, քիչ, թեթև, քաջ, մեղմ, ամբողջ: 2-3րոպե աշակերտները կմտածեն, ուսուցիչը կարող է ուղղորդել:

Քաղաք-քաղաքեքաղաք,քաղաքավարի

Տուն-տնետուն,տնավարի

Օր-օրըստօրե օչեցօր,օր օրի

Թեթև-թեթևակի

Շեշտ-շեշտակի

Չորս-քառակի

ՈԻղեկցված կապ- առաջադրանք համացանցով (եթե դասարանում կան համակարգիչներ ավելի լավ, կարելի է աշխատել նաև հեռախոսներով, իսկ եթե որևէ աշակերտ չունի, կապահովի ուսուցիչը):

Առաջադրանք

1խումբ – Դուրս գրել մակբայները, որոշել տեսակը Վ. Տերյանի <<էստոնական երգ>> բանաստեղծությունից:

Եթե բախտն ու վայելքները քեզ ժպտան,

Օտար մարդիկ քեզ սիրաբար ողջույն տան,

Գուցե ես լամ բախտիդ համար, ի՝մ անգին,

Սակայն դարձի՝ր վերադարձի՝ր դու կրկին:

Այստեղ ուսուցիչը աշակերտների ուշադրությունը հրավիրում է դառնալ - վերադառնալ բայաձևին:

2-րդ խումբ-Դուրս գրել մակբայները, որոշել տեսակը Վ. Տերյանի ,,Fatum'' բանաստեղծությունից:

Կախարդական մի շղթա կա երկնքում,

Աներևույթ, որպես ցավը խոր հոգու,

Իջնում է նա հուշիկ որպես իրիկուն՝

Օղակելով լույս աստղերը մեկմեկու

Առկայծում են կարոտագին երազուն,

Հավերժաբար իրար կապված և բաժան

2.խումբ «Աշնան երգ» Դողացին մեղմաբար.....

«Աշնան մեղեդի» դողում են դանդաղ պաղ միապաղաղ

Նայի՝ր, ախ՛ նայի՝ր,ցավում է նորից....

«Հրաշք աղջիկ»

Ազատ սիրտս շղթայեցիր առհավետ

Հրաշ՝ք աղջիկ, դու միշտ հաղթող ու միշտ հեզ:

Դու դեռ չես մեռել ի հիվանդ սրտում

Դու դեռ ապրում ես երազի նման,

-Բայց չէ՞ որ միշտ էլ երազ էր միայն պայծառ պատկերդ այս անապատում....Ես ամենուրեք քեզ եմ որոնում:

3.խումբ

Ես անջատված եմ հայրենի հողից,

Հայրենի տունս ՝ իմ սրտին օտար:

Ինձ այրում է միշտ մի անհագ թախիծ հավիտյան դյութող անհայտ ճանապարհ:

-Հուզվում են, հոսում հեղեղները մեծ,

Մագլցում վերև և թավալվում ցած:

-բայց դու անհաս ես, հավիտյան հեռու

Ելնում են դարձյալ ավերջ ճանապարհ:

Գարունը այնքան ծաղիկ է վառել,

Գարունը այնպես պայծառ է կրկին,

Ուզում եմ մեկին քնքշորեն սիրել,

Ուզում եմ անուշ փայփայել մեկին:

-Ես կգամ երբ դու մենակ կմնաս...

Գուցե դու հանկարծ պատահմամբ դուրս գաս....

Կարելի է նաև դասը կազմակերպել այսպես: Ուսուցիչը զգուշացնում է աշակերտներին դասին ունենալ Տերյանի «Մթնշաղի անուրջները» ժողովածուն (հեռախոս, պլանշետ…): Աշխատում են զույգերով: Բանաստեղծություններից դուրս են գրում մակբայներով տողեր: Տրվում է ժամանակ -15 րոպե:

Որ զույգերը շատ և ճիշտ դասակարգված մակբայներ կգրեն, կգնահատվեն:

Ուսուցիչը գրատախտակին գրում է մակբայները՝*ամենևին, այլևս , բնավ , էլ, բոլորովին, դյուզն-ինչ, երբեք:*

Առաջարկվում է աշակերտներին կազմել նախադասություններ ՝ օգտագործելով նշված մակբայները:

<u>Ամենևին</u> չեմ մտածել այդ մասին: էլ (այլևս) ընկերություն <u>չանես</u> նրա հետ: <u>Բոլովին չի հուզում</u> ինձ:

<u>Դույզն- մի՝ինչ մտահոգվիր:Երբեք չասես երբեք:</u>

Գալիս ենք հետևության. այս մակբայները գործածվում են *ժխտական* խոնարհման բայերի հետ :

Դաստիարակչական նշանակություն կունենա <u>երբեք չասեք երբեք</u> նախադասության բացատրությունը: (Պետք է զգույշ լինել և՝ բառերի, և՝ արարքների համար:)

Թեմայի ամփոփման համար առաջարկում եմ հետևյալ աշխատանքը (3.147): Ունենք չորս գույնի կավիճ (համապատասխանում է մակբայի 4 տեսակին): Գրատախտակի մի կողմում գրում ենք բառահիմքը, մյուսում՝ ածանցը :Առաջարկում ենք խաղալ <<Գտի՛ր ինձ >>:

Կապույտ կավիչ տեղի մակբայ

Կարմիր ձևի

Կանաչ ժամանակի

Սպիտակ չափի

Կարմիրը կապույտը կանաչը սպիտակը



Ամփոփում

Ներկայացված է «Մակբայ» թեմայի ուսուցման ընթացքը: Օգտագործելով ուսուցման մեթոդներ՝ քայլ առ քայլ հասնում ենք նպատակին՝ ճանաչել մակբայ խոսքի մասը, իմանալ նրա քերականական և բառակազմական առանձնահատկությունները, հիմնավորել, որ լինում է բայական անդամի, ինչպես նաև՝ ածականի լրացում (չափի մակբայ):

Բանալի բառեր – բայ, մակբայ, բայի հատկանիշ, նախադասության լրացում, տեղի ,ձևի, չափի, ժամանակի մակբայ, ընդհանրական մակբայ, ժխտական խոնարհում:

Գրականություն

1. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Աբրահամյան Ա., Հայոց լեզու և հայ գրականություն: Ձեռնարկ-շտեմարան, Ե., «Զանգակ» հրատ., 2009, 352 էջ:

2. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Հայոց լեզու: Ձևաբանություն:Դպրոցական մատենաշար, Ե., «Զանգակ» հրատ., 2015, 320 էջ:

3. Գյուլբուդաղյան Ս. Վ., Հայոց լեզվի մեթոդիկա, Ե., ԵՊՀ հրատ., 1978, 326 էջ:

4. Գյուրջինյան Դ. Ս., Հեքեքյան Ն. Հ., Հայոց լեզու. գործնական աշխատաքների ձեռնարկ բուհերի ուսանողների համար, Եր., «Ասողիկ» հրատ., 2006, 232 էջ:

Եզեկյան Լ., Հայոց լեզու, Ե., Երևանի համալ